ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի.

ք.Գավառ 5 դեկտեմբերի 2018թ.

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 13-րդ կետի համաձայն սույն թվականի դեկտեմբերի 5-ին ժամը 12.00-ին՝ հետադարձ աճուրդի ներկայացման վերջնաժամկետին, ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում տեղի ունեցավ «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով (eauction.armeps.am կայք) համակարգի միջոցով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Ա. Հ. Ապրոյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Ն. Ա. Կուտուզյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Խ. Ժ. Սաֆարյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Լ. Գ. Սիրունյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Ս. Պ. Կարապետյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Ս. Բ. Ղարաբաղցյան

Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

հ/հ	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների ՀՎՀՀ-ները	Մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեները
1	«ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	02614085	tender@cps.am
2	«ՖԼԵՇ» ՍՊԸ	01808789	flashltdtender@gmail.com

Հանձնաժողովը գնահատեց.

1) «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝

- դիմում-հայտարարություն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու վերաբերյալ՝ հավելված N 1, և լիազորագիր՝ ընկերության անունից ընթացակարգին մասնակցելու մասին,
- գնային առաջարկ՝ 1-ին չափաբաժնի համար

2) «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝

- դիմում-հայտարարություն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու վերաբերյալ՝ հավելված N 1,
- գնային առաջարկ՝ 1-ին չափաբաժնի համար

Գնման առարկայի նախահաշվային գինը՝

Դիզելային վառելիք ամառային, կտրոններով
450.000 /չորս հարյուր հիսուն հազար դրամ/

3) Համակարգի միջոցով «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից հարցում էր կատարվել հրավերով նախատեսված գնման առարկայի մատակարարման ձևի վերաբերյալ, որին տրվել է համապատասխան պարզաբանում:

4) Էլեկտրոնային աճուրդի անցկացման ընթացքում մասնակիցների կողմից նախօրոք ներկայացված գնային առաջարկները չեն փոփոխվել:

5) Էլեկտրոնային աճուրդն ամփոփելու պահին մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների համադրում ՀՀ դրամով, առանց ԱԱՀ-ի՝

Չափաբաժինը	Գնման առարկայի անվանումը	«ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	«ՖԼԵՇ» ՍՊԸ
1	Դիզելային վառելիք ամառային, կտրոններով	379166.67 /երեք հարյուր յոթանասունինը հազար մեկ հարյուր վաթսունվեց դրամ, վաթսունյոթ լումա/	375000 /երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ/

6) Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների գնահատման ընթացքում համակարգի կողմից մերժվել է «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը՝ նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

7) Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

8) Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

✓ 1 չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՖԼԵՇ» ՍՊԸ -ին:

✓ Սույն արձանագրությունը հրապարակել պաշտոնական տեղեկագրում և տեղեկացնել ընթացակարգի մասնակիցներին:

- ✓ Առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել հրավերով նախատեսված սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին ներկայացնել իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:
- ✓ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման համար հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հրավերով նախատեսված որակավորման պահանջի վերաբերյալ:
- ✓ Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել ՀՀ ՊԵԿ-ի կողմից հրավերով սահմանված տեղեկատվությունն ստանալու և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացնելու օրվան հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 5 և դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ		Ա. Հ. Ապրոյան
Գնահատող հանձնաժողովի նախագահ		Ն. Ա. Կուտուզյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Խ. Ժ. Սաֆարյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Լ. Գ. Սիրունյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Ս. Պ. Կարապետյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար		Ս. Բ. Ղարաբաղցյան